



ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտան 10—2 ժամ

(բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարությունը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարությունների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Շուշան Գովհանէսեան Բարսաղեանց, Աննա և Բարսեղ Առաքելեանցներ, սրտի
ցաւով յայտնելով՝ առաջին իր ամուսնու, երկրորդը՝ եղբոր և երրորդը՝ իր մօր-
եղբոր

Ա Ր Տ Ե Մ Ե Ի Գ Ր Ա Ֆ Ե Ա Ն Ք Ա Ր Տ Ա Շ Ե Ա Ն Յ Ի

մահը, խնդրում են ազգականներին և բարեկամներին՝ շնորհ բերել յուզարկաւոր-
ութեանը, որ տեղի կունենայ հինգշաբթի, ամսին 11-ին, առաւօտան 10 ժա-
մին, սեփական տնից, Սոթիակ, Օրթոկայա փողոց, վազնսեփական փողոցի մօտ,
դէպի Ջորաշէնի Աւետեաց եկեղեցին:

Ամբիջը կը կատարվի չորեքշաբթի, ամսին 10-ին, երեկոյան 7 ժամին: 2—2

Ծաղիկ Սարգսեան, Սիմէօն, Ստեփաննոս և Գովհանէսեան
թեաները, սրտի ցաւով յայտնում են՝ առաջինը թանգազին ամուսնու, իսկ
վերջինները՝ սիրելի եղբոր՝ Վաղդիկովիկազում վախճանված

Ն Ի Կ Ո Ղ Ա Յ Ո Ս Ռ Ո Ս Տ Ո Մ Ե Ա Ն Գ Ո Վ Լ Ա Թ Ե Ա Ն Յ Ի

մահը և խնդրում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին՝ շնորհ բե-
րել սեփական տուն, Օրթոկայա փողոց, № 31, հինգշաբթի, ապրիլի 11-ին,
առաւօտան ժամը 9½, յարգելու հանգուցեայ յուզարկաւորութեան հանդէսը
իրանց ներկայութեամբ: Վին կը տարվի երկաթուղու կայարանը, իսկ այնտեղից
էլ՝ Բաղու:

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բաղարական անկախ եկեղեցի.—Ներքին Տե-
ստիքի.—Օրէնք.—Նամակ Բագրատի.—Նամակ
Խմբագրութեան.—Նամակ Խմբագրութեան.—Նա-
մակ Խմբագրութեան.—Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՏԻԿԻՆ. վեր-
ջին տեղեկություններ. Նամակ Պարսկաստանից.
Արտաքին լուրեր.—ԽԱՌՆԻ ԼՈՐԵՆ.—ՀԱՌԱՅԻՒՆ-
ՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Էստոնացիական գրականութիւն.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԼՏՆՕԳՐԱՖԻԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«Ազգագրական Հանդէս»-I գիրք: Հրա-
տարակիչ Երուսաղէմ, 1896.

Շատ ժամանակ է, որ Ե. Լաւայեանց յայտա-
րարում էր անդադար թէ «Ազգագրական Հան-
դէս» պիտի հրատարակէ: Վիճանայի Միտիթա-
րեանները բաւական թեկնածու արին պարտի
հասցին, այնպէս որ մենք սպասում էինք, որ
մասնագիտական այդ պարբերականը եթէ ոչ սո-
վորականից դուրս, գոնէ մի հետաքրքիր բան կը
լինի: Այդպիսի անկախութիւնը բնական է դառ-
նում նոյն իսկ գիրքը տեսնելիս: Նա ունի ար-
տաքին պատկառելի գիրք. մի ասուար հատոր
(516 մեծագիր երես), որի մէջ կան հիմնային
պատկերներ՝ տպված Միտիթարեանների տպա-
րանում, ապա մի բովանդակութիւն, որի մէջ
պատահում ենք վիրիսով, Լեւոնի, Պետրի գիտ-
նականների անունները և գործերը: Արտաքին
տպագրութիւնը, կրկնում ենք, շատ լաւ է. և
մենք միանգամայն գովում ենք այ. Լաւայեանցի
հրատարակչական եռանդը և անվախութիւնը
գրական զանգուշութիւնների առաջ:

Ծանօթանալով «Հանդէսի» բովանդակութեան
հետ, մենք միանգամայն համոզվեցանք, որ այ. Լա-
ւայեանց իր պիտիքը և կարողութիւնից բարձր
գործի է ձեռնամուխ եղել:—Գրքի սկզբում հրա-
տարակիչը, փոխանակ հանգստի և առան, պարզ
ոճով պատմելու իր նպատակը, հրատարակու-
թեան ուղղութիւնը, միտքը, մի շարք պատկե-
տական բացականչութիւններով և բանաստեղ-
ծական գիտնականներով ուղղում է բացատրել թէ ինչ
է ուղղում անել ինքը, բայց պարզ ու որոշ ոչինչ
չէ ասում: Նա յայտնում է, որ ազգի մէջ կայ

ԲՈՂԱՐԱԿԱՆ ԱՆԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Մինչև 1872 թիւը բաղարական եկեղե-
ցին գտնվում էր յունաց անկախութեան պատ-
րաքին իրաւասութեան տակ և բաղարա-
կան եկեղեցին կազմում էր միայն արեւե-
լեան-յունական կամ օրթոդոքս եկեղեցու մի
մասը: Սակայն բաղարները ձգտելով քաղա-
քական անկախութիւն ձեռք բերելու, ձգե-
ցում էին մի և նոյն ժամանակ և ազգա-
յին ինքնուրոյն եկեղեցի ունենալու և մի-
անգամ ընդ միշտ ազատվելու յոյն հոգեւո-

ւորութեան զգացում և շարունակում
է. «Մեր այս գործն այդ զգացման արդիւնքն է
և մեր կոչումը՝ այդ գործին զիտական ուղղու-
թիւն տալ և աշխատողների մէջ միութիւն հաս-
տատել: Որն է այդ գործը: Այն, որ ազգը
կամենում է ձանաչել իրեն և իր ազգային յատ-
կութիւնների վրա հիմնել ազգային զարգացու-
մը: Իրան պիտի զիտական ուղղութիւն տայ
պարտը: Արդեօք չափազանց մեծ գործ չէ այդ,
այ. Լաւայեանց. անհամեստութիւն չէ, եթէ աւե-
լին չասենք, այդպիսի մի խոտուած:

Մենք կը տեսնենք պարտի խօսքերի արժէքը
Առաջին յօդուածը կրում է «Համառօտ տե-
ստիքի» հայ ազգագրութեան վերան վերնագի-
րը: Ինքը, այ. Լաւայեանցն է գրել այդ յօդուածը
ենրա մէջ սեփական ոչինչ չունի: Խոսում է հին
երգերի մասին, որոնց բերում է խորհրդային,
կրկնում է այն ամենը, ինչ որ վաղուց յայտնի է
գտնաբերում ուսումնասիրողների գործերից: Ամեն
մի խնդրի վերաբերմամբ յօդուածագիրը բերում
է վկայութիւններ հայ և օտար հեղինակներից և
մի երկու տեղ իր ինքնուրոյն ստեղծագործու-
թիւնը ներմտվ է յայտարարում, որ վկայում է
թէ ինքը ընդունում է այս ինչ գիտնականի կար-
ծիքը: Ոչինչ բան չէ պարզվում. դարձեալ բաւ-
րիւր մնում է անյայտ, դարձեալ ենթադրական
է մնում «Թուրքեայ երգերի» հոգիները: Հետա-
քրքիր կը լինէր իմանալ թէ ինչ պիտի անէր յօ-
դուածագիրը, եթէ մինչև այդ տեսութիւնը տը-
պագրելը հրատարակված լինէր: Գ. Խալաթեանի
նոր ուսումնասիրութիւնը, ուր հին վիպասանու-
թիւնների, պարերի մասին բազմաթիւ հակառակ
կարծիքներ կան... Հետաքրքիր է նաև իմանալ
թէ ինչու միայն խորհրդային երգերն են կաղ-
մում հայ ազգագրութեան գոհարները...

Խնդրույն յօդուածների մէջ է «Եթեօք», մի
հատարակ տեղագրութիւն, որի մէջ բերված են
վանքերի արձանագրութիւնները: Պ. Լաւայեան ա-

րականութեան խնամակալութիւնից: Բաղա-
րական ինտելիգենցիան և բաղար ազգի դե-
կալարները համարում էին ազգային ան-
կախ, ինքնուրոյն եկեղեցին իբրև մի միջոց
տարածելու իրանց պրօպագանդան և ազ-
գային անկախութեան միտքը: Բաղար հայ-
րենասերների ծրագիրը—ունենալ ազգային
ինքնուրոյն, անկախ եկեղեցի, իրագործվեց
միայն 1872 թիւին, ուստի կառավարութեան
աջակցութեան շնորհիւ, և բաղար եկեղե-
ցին անջատվեց յունական եկեղեցուց ու
կազմեց առանձին, բաղարական եկեղեցի,
նոր հովուապետ—Էկզարխի առաջնորդու-
թեան ներքոյ:

Տարաբազմ չէր կայ, որ բաղարական եկե-
ղեցու այդ անջատումը, և ձգտումը դուրս
գալ յունական եկեղեցու իրաւասութիւնից՝
մեծ ընդդիմութիւն գտաւ յունաց տեղե-
րական պատրիարքի և յունական եկեղեցու
կողմից, և բաղարական եկեղեցին հրաժա-
րակից պատրիարքի կողմից իբրև հիւ-
ճուած ող: Մինչև անգամ Երուսաղէմի
պատրիարքը և Անտիօքի պատրիարքը, որոնք
համաձայն էին տեղեկերական պատրիարքի
այդ որոշման հետ, եկեղեցիներն բանա-
դրանքի և այդպիսով յարաբերութիւնները
երկու եկեղեցիների մէջ ընդհատվեցին և
միանգամայն խզվեցին:

Քաղաքական տեսակետից բաղարական
եկեղեցին, անշուշտ, միայն օգտվում էր այդ
հերձուածից, և օգտվում էր շատ նշանա-
ւոր կերպով, որովհետեւ բաղարների գլխա-
ւոր նպատակը ոչ թէ կրօնական շահերն
էին, այլ քաղաքական,—մակէդոնական ինք-
նավրէ: Ունենալով Կ. Պոլսում նստող առան-
ձին եկեղեցական գլուխ—Էկզարխ, միան-
գամայն անկախ յունական պատրիարքից,
որին չունենալով նրա վրա որ և է հըս-
կող, բաղարները Էկզարխի ձեռքով քարո-

ւածարանի մէջ սակ է թէ իր կոչումը չայտ-
միայն նիւթեր հաւաքելն է, որովհետեւ դրանց
պակասութեան պատճառով զիտական ուսումնա-
սիրութիւններն անհնարին են: Եթէ Եթեօքի
պէս նիւթերի պակասութիւն է գտնվում. Լաւայեան,
պէտք է, ուրեմն, ասել որ նա ծանօթ չէ մեր
գրականութեան հետ: Եւ որքան արեք, մեր մէջ հին
վանքերի նկարագրութիւններից, արձանագրու-
թիւններից ասել ինչ կարող էք գտնել:

Այս գաղիս է այ. Լաւայեանի «Ջաւախք»-ը, որ
բռնում է 261 երես (գրքի կէսից քիչ ասել). դա
մի մանրամասն, բարեխիղճ և շատ հետաքրքրա-
կան տեղագրութիւն է, որ կարգաւորում է Եւփր-
ժանքով: Ժողովրդական կենսական և ոչ մի կողմը
չէ մոռացվել. տնտեսական կեցութիւն, սովորու-
թիւններ, աւանդութիւններ, խօսք ու լրջոյց—ա-
մեն բան կայ: Այս գրութեանը են վերաբերվում
մի քանի հատ շատ սիրուն պատկերներ: Այստեղ
էլ պիտի ասենք, որ տեղագրական և ազգագրա-
կան այսպիսի առատ նիւթեր քիչ չը կան մեր
գրականութեան մէջ: Մենք, ի հարկէ, բնական ենք
համարում, որ այսուհետեւ այդպիսի նիւթեր հա-
ւաքվին «Ազգագրական Հանդէսի» մէջ, բայց
գրանով մենք վերջացրած չենք համարի այն կո-
չումը, որ այ. Լաւայեանց վերագրում է իրան և որի
միջոց է գիտական ուղղութիւն տալ ազգի ինք-
նաձանաչութեան գործին: Մենք չենք մոռանալ
այդ խոտուածը և թող չենք տայ, որ այ. Լաւայեանց
գործած է այդպիսի խօսքեր իբրև սիրուն, գեղե-
ցիկ ֆրազա, որ հարկաւորվում է լեզուական
փառի համար:—Թէ չէ «Ջաւախքի» պէս սիրուն
նկարագրութիւններ տալիս է և թիւրքերից Զ.
Հանիկեան, որ Ալին քաղաքի կենսական կազմը
մի ահագին հատոր, բայց սակայն յաւանդու-
թիւն չունի կարծելու թէ ինքը պիտի ուղղու-
թիւն տայ...

Թեթիս յօդուած է բժ. Օսմանեանի «Կրակը»:
Կարգաւորող կը հակառակ մի քանի բան կրակի

գում էին Մակէդոնիայում բաղարական միու-
թեան իրէան: Սակայն բուն կրօնական տե-
սակետից, «հերձուածող» մակնոշներն այնու-
ամենայնիւ շատ էլ լաւ չէր հնչում մոլե-
ռանք և կրօնասեր բաղարների ականջին և
օրթոդոքս եկեղեցու հետևորդներին, և այդ
պատճառով երբեմն երբեմն լինում էին ա-
ռանձնական ջանքեր վերջնէլ հերձուածք
և ազատել բաղարական եկեղեցին տեղե-
րական պատրիարքի բանադրանքից:

Ռուսաստանի և Բաղարիայի հաշտու-
թիւնից յետոյ, այդ ջանքերը ասելի լայն
ծաւալ ստացան և Բաղարիայի նոր ձանաչ-
ված իշխանը, Ֆերդինանդ պրինցը, նորին,
Կ. Պոլսում եղած ժամանակ, սկսեց բանակ-
ցութիւններ անել յունաց պատրիարքի հետ
յունական եկեղեցու և Բաղարական եկեղե-
ցու հաշտութեան կամ «հերձուածք» վե-
րացնելու մասին: Սակայն հաշտութեան
մասին սկսված այդ բանակցութիւնները,
հախառակ սպասածին, զրգուել են բաղար
ազգի դժգոհութիւնը և տրտմանը: Կրկնէլ
բոլոր կուսակցութիւնները և ամբողջ բաղ-
արական մամուլը, առանց ուղղութեան
խտրութեան, բողոքում են այդ նոր ձեռ-
նարկութեան դէմ, համարելով նրան վնաս-
ակար բաղարական ազգային շահերի հա-
մար: Գունաց պատրիարքը իբրև գլխաւոր
պայման հաշտութեան դնում է Էկզարխի Կ.
Պոլսից տեղափոխվել Սօֆիա: Եթէ այդ
պայմանը ընդունվի, Էկզարխը այլ ևս չէ
կարող Բաղարիայից կառավարել Թիւրքիա-
յում գտնվող թեմերը, հետեւաբար Մակէ-
դոնիան կընկնի յունաց պատրիարքի իրա-
ւասութեան ներքոյ, իսկ այդ հանգամանքը
բոլորովին ցանկալի չէ բաղար հայրենա-
սերների համար, որոնք ձգտում են միաց-
նել Մակէդոնիան Բաղարիայի հետ:

Այդ է պատճառ, որ երկու եկեղեցիներ-

պատմութիւնից: Սակայն նոյն կարգաւորող մի
որոշ բան չի հասկանալ «Խաջալուրի գերեզման-
ները» վերնագրով յօդուածից, որի մէջ վայրի-
վերոյ, թերատ տեղեկություններ կան այ. Ռեպե-
րի շատ հետաքրքրական պեղումների մասին:

Այսքանով էլ վերջանում է «Հանդէսի» ինք-
նուրոյն բաժինը: Գալով թարգմանականին, մենք
գտնում ենք այդ բաժնում երեք նշանաւոր գոր-
ծեր. 1) Ռ. Վիրիսի «Կրակի» տեղի քաղա-
քակրթութեան պատմութեան մէջ: (Թարգ. Լ.
Բաղարեանցի), 2) Օրթոք. Պետրի «Բարդա-
նութեան պատմական զարգացում» (Թարգ. Լա-
ւայեանցի) և 3) Դ. Լեւոնի «Վառանդութեան
զարգացում» (Թարգ. նոյնի):

Այդ թարգմանութիւնների առիթով մի քանի
խօսք:

Ամեն անգամ, երբ խօսք է լինում որ և է նը-
շանաւոր գիտնականի գիրք թարգմանելու մասին,
գուց լսում ենք այսպիսի հարց. «Եթէ պիտի կար-
դայ: Եւ իրաւ. դուք լաւ գիտեք, որ հայոց փոք-
րաթիւ լիտերատուրային, որ հետաքրքրվում է
գրականութեամբ, մի այդպիսի գիտնական գրքի
հետ ծանօթանալու համար կարօտութիւն չունի
ձեր թարգմանութեան. նա կարող է կարգա-
կամ բնագիրը, կամ նրա թարգմանութիւնը մի
այլ, ասելի տեխնիկական զարգացած լեզուով,
որ հնչու և ուղիղ հասկանալու բոլոր յատկու-
թիւններն ունի: Մնում է ընթերցողը հասարա-
կութեան միջին դասակարգը, նա, որ օտար լե-
զուով կարգացած արեւմտեան ճիշդ չէ կարող ըմ-
բռնել: Ինչպէս ըմբռնում է մայրենի լեզուով
կարգացածը: Այդ դասակարգի համար է նշանակ-
վում մեր գրքերի ամենամեծ մասը: Եւ եթէ հար-
կաւոր է որ գիրքը տարածվի նրա մէջ, դա-
տարակէ նրան, ուրեմն պէտք է ամենից առաջ
չը մոռանալ նրա չափը, նրա պահանջները:

Մարդաբանութեան, ազգագրական գիտութեան
մասին մինչև այժմ մեր մէջ չեն եղել ոչինչ հա-

դու անունը, որ մասնակցի ծառայելով, տղադրա-
կան խօսքին տղադրական խօսքով է պատաս-
խանում, և վստահանալով, զիմե ուրիշ միջոցի,
այնքան քաղաքացիական քաջութիւն չունի, որ
հակառակորդի առաջը դուրս գալիս չմտնի, որ
այլ մօտենում է նրան անկիւնից, թաքնված:

Իրա հետ միասին հրապարակով դիմում եմ
«Արձագանք»-ի այժմեան ժամանակաւոր խմբա-
գիր պ. ֆիլիպոս Վարդանանին, խնդրելով, որ
նա իբր այդ խմբագրութեան ներկայացուցիչ,
հրապարակով յայտնի, թէ արդեօք ինքը համակ-
րում է իր աշխատակցի այդ ստոր վարմունքին,
թէ պախարակում—Դա ինձ հարկաւոր է:

Թող եմ տալիս ինձ աւելացնել և այն, որ ես
վերջին աստիճանի հպարտ կը զգայի ինձ, տես-
նելով, թէ ինչպէս իմ գրական հակառակորդնե-
րը՝ բարոյապէս այնքան ընկել են, որ նոյն իսկ
պատուի ինքրի մէջ՝ այնքան երկչոտ և ստոր են,—
եթէ միայն այդ թշուառականների անունները
և գրանց սկանդալները կապված չը լինէին հայոց
մամուլի անուան հետ:

Այսօր այսպէս:

Խ. Մարտիան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մօսկվա, ապրիլի 3-ին
Խոնարհաբար խնդրում եմ «Մշակ» լրագրի
առաջիկայ համարներից մէկում զետեղէ հե-
տեւեւր, ի գիտութիւն հայ հասարակութեան:

Ի նկատի ունենալով, որ այժմ Լազարեան ձե-
մարանը ձրիաւոր աշակերտ ընդունվելու հա-
մար՝ կան վախճան կանգնողներ, իսկ իւրա-
քանիւր տարի աղատվում է հինգ տեղից ոչ ա-
ւելի, այդ պատճառով, երկու տարի ոչ մի
խնդիր՝ Լազարեան ձեմարանը ձրիաւոր աշա-
կերտ ընդունվելու համար չի ընդունվի:

Վերադառնալ Լազարեան ձեմարանի արևե-
լեան լեզուների՝ Գեորգ Քանանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Եւս (Գերմանիա), մարտի 30-ին
Խնդրում եմ տեղ չնորհել մեր երկաւորին
«Մշակ» մօտակայ համարներից մէկում՝ ի գի-
տութիւն խմբագրութեան և առհասարակ զըր-
թողիներ հրատարակողներին:

Սրանից երկու տարի առաջ յարմար և կարևոր
համարներից Բե ր յ յ ա տ յ ի ժողովրդական բը-
նագիտական գրքայինը, զանազան փոխադրու-
թիւններով խմբագրանալով կազմել, տեղ տեղ
աւելացնելով զանազան հեղինակներից՝ ներկայ
գիտութեան պահանջներին համեմատ, տեղ տեղ
էլ կրճատելով, որպէս մեր կենսական անյարմար
և կամ հնացած: Յիշեալ գրքայինը մեծ մասամբ
պատրաստ են, ինչպէս՝ «Ֆիզիկայի տարրական
մասերը», «Մաթիկ և բնօրինակութիւն», «Տեսնու-
թիւն», «Բնագիտ», «Ուժերի մասին», «Էլեկտրական-
ութիւն», «Մագնիսականութիւն», «Քիմիա»,
«Միջատներ» և այլն և այլն: Սրանից առաջին
չորսը անցեալ 1895 թ-ի օգոստոսի սկզբներին
խմբագրութեան ընկալութեանը հրա-
տարակելու համար: Դժբաղդաբար, մեզ անցող
պատճառներով, մինչև այսօր էլ պատասխան չու-
նենք, թէ և սրանից մօտ երեք ամիս առաջ ա-
ռանձին նամակով էլ դիմել էինք ընկերութեա-
նը: Գրքայինների ամբողջ թիւը լինելու է 60—70,
որոնք և ամփոփելու են բոլոր բնական գիտու-
թիւնները: Գրքայինները հրատարակելու են մաս-
մաս, եթէ մինչև անգամ Հրատարակչական ընկե-
րութիւնը յանձն չառնէ իր կողմից հրատարակելու:

Ա. Ջիլիկարեանց
Տ. Ռաչմանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երևան, ապրիլի 4-ին
Բարեգործական ընկերութեան ներսին ձեռքի
վարչութիւնը խնդրում է մի անկիւն չնորհել
«Մշակ» էջերում հետեւեւ երկուողին—Ազու-
լեցի հանգուցեալ Ստեփան Գեորգեանի փառանգ-
ներից ներսին ձեռքի տեղական վարչութիւնը
ստացաւ, ի յիշատակ հանգուցեալի՝ 200 ռուբլի
նուէր, ի նպատակ ընկերութեան, որի մասին սը-
րանով յայտնում է իր խորին շնորհակալութիւնը:

Նախագահ վարչութեան՝ Գ. Տէր-Խաչատրեանց
Քարաւոյան՝ Մ. Պանոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԿԻՐ

Ապրիլի 9-ին, երեքշաբթի, ժամը 2-ին, կա-
թողիկոսական տեղակալ ներսին արքեպիսկո-
պոսը այցելութիւն տուեց Կովկասի կառավար-
չապետ զեներալ-ադիւտանտ Զէրեմէտովին: Սըր-
բազանի հետ պ. Կառավարչապետին ներկա-
յացաւ և Մեքսիկո վարչապետը: Ներքի, ամսիս
10-ին, ներսին արքեպիսկոպոսը ճանապարհ ըն-
կաւ դէպի Պետերբուրգ, Քիշինեվի վրայով:

Ելմիածնի պաշտօնական օրգան «Արարատ»
ամսագրի մարտի համարում տպւած է հետեւեա-
լը: «Ատորախանի առաջնորդ գերապատիւ Ա-
րիստակէս սրբազան արքեպիսկոպոսն իբրեւ ա-
ռաջնորդ Ատորախանի հրաւեր ստանալով Տէր
Նախարարից ս. Թագադրութեան հանդէսին ներ-
կայ լինելու, խնդրեց Վեհափառ Հայրապետին
օրհնութիւնը և հեռաձայնով պատուէր ստացաւ
փոխադու Պետերբուրգ: Գերապատիւ Արիստա-
կէս արքեպիսկոպոսն արդէն իսկ ուղևորվել է
մայրաքաղաք»:

Այս օրերս թիֆլիս եկաւ մի ֆրանսիացի ճա-
նապարհորդ, Պիէր Մօրան, որ վերադարձել է
Անգղիական երկրից և կամենում է մի փոքր
պատկոտ անել Անգղիականում և ապա վերադառ-
նալ Ֆրանսիա: Նա այցելել է Քոլոնայից, այժմ
ուղևորվել է թիւլուի գաւառը, այնտեղից կը
վերադառնայ և կը գնայ Նիւսն: Մօրան հետա-
քրքրում է ազգագրական և ժամանակակից հա-
սարակական խնդիրներով:

Այս տարի հեղեղներ տեղի ունեն ոչ միայն
Կովկասում, այլ և հարաւային Ռուսաստանում:
Հեղեղներից փնտրվել են շատ գիւղեր և մար-
դիկ:

«Արարատ» հաղորդում է, որ Ելմիածնի
վանքի բակում, հին փառանգաւորաց զարդի
հարաւային մասը քանդելու ժամանակ, գտնվել
են պարսկի բուրգներից մէկի մէջ հին իրեր,
զլիւստորապէս պղնձեղէն—կաթնամեր, լուսացա-
րաններ, լապտերներ, սյաններ և չղթաներ:
Այդ գիւտի մասին տեղեկութիւն է տրված Կայ-
սերական Հնագիտական ընկերութեան, որը
յանձնել է միաբան Գալուստ Տէր-Մկրտչեանին
մի մանրամասն գեկուցագիր ներկայացնել:

ՆՈՒՄԱՐԱԿ ԵՄԵՐՈՒՄ մեզ գրում են. «1,200-ից
աւելի ծով ունեցող մեր քաղաքը ներկայումս
ունի 9 քահանաներ, որոնք, անշուշտ բացառու-
թեամբ, արժանի չեն իրանց կոչման: Շուտով
ձեռնադրվում է նաև էլի մի քահանայ, իսկ մի
ուրիշն էլ՝ նոր է սկսել համադրական կազմել:
Երկուսն էլ անուշ, երկուսն էլ տղա: Մեզա-
նում քահանայի եկամուտը միջին թիւով հասնում
է 180 ռուբլու, և ահա այդպիսի պայմաններում
մեր հասարակութիւնը աւելացնում է 2 նոր քա-
հանաներ ես—մի վարժուհի, որ իրան թիւը չը
սխալի սաչ ոչ մի խնացի քաղաքացի: Ուղակի ձեզ
ենք դիմում, յարգելի հասարակութիւն, եթէ դուք
այդպիսի համադրականներ կազմելով՝ ձեզ չեք
խղճում, խղճացէք գոնէ ձեր ապագայ սերունդը,
որ անշուշտ նոյնը է կարգաւոր ձեր գլխին»:

ԿՐԱՄՆՈՎՈՎՈՎԻԿ մեզ գրում են. «Այստեղի
հարուստ հայ վաճառականները, բացի իրանց
մշտական պարագայութիւնը, ունեն մի այլ պա-
րագայութիւն՝ ձկնալվաճառութիւն: Չուլը այստեղ
ստացվում է մեծ քանակութեամբ և արտահան-
վում Ատորախանի ջրհորները գլխաւորապէս
բուն տեղացիք են՝ թուրքմէններ, որոնք իրանց
որսած ձուկը յանձնում են հայերին, ստանալով
պուզի գինը՝ 1 ռուբլի 80 կոպէկից—2 ռուբլի
և տարվայ վերջը «խալաթ» հաղարկելով: Այս
տարի այս գործով պարագայով հայ վաճառա-
կանները վճռեցին պայմանաւորվել միասին
հիմնել մի ընկերութիւն, որպէս զի վերացվեն
այդ «խալաթները» և մեան յօգուտ ընկերու-
թեան կազմեցին փողովներ, բայց ապարդիւն
անցան, որովհետև համաձայնութիւն չը կայա-
ցաւ: Այդ պատճառով, միմեանց հակառակ,
վարձեցին ձկնորսներ թանգ գնով: Արդեօք ինչ
են մտածում մեր վաճառականները, որ ձկան
սուղը հասցրին 2 ռուբլի 60 կոպէկի: Վերջա-
պէս երբ դրանք կը սովորեն ընկերութեամբ մի
բան չինել»:

ԱՍԽԱՐԱԿ մեզ գրում են. «Մարտի 31-ին
քաղաքային փողովարանի դահլիճում, սիրողների
մասնակցութեամբ, տեղի ունեցաւ մի ներկայա-
ցում: Ներկայացրին Ստեփանեանցի «Պեպոն» և
«Սուտ ճգնաւոր»: Սիրողները բարեխաղութեամբ
կատարեցին իրանց դերերը: Գահլիճը գրեթէ լի
էր հանդիսականներով, որոնք գոհ սրտով հեռա-
ցան՝ յայտնելով իրանց շնորհակալութիւնը սի-
րողներին»:

ՆՈՒՄՈՒՅ մեզ գրում են. «Մարտի 26-ին
այրվից տան և մէկ խանութ, մեծ մասը ար-
հեստաւորների: Հրդեհը սկսվեց գիշերվայ ժամի
11-ին մի հայթիւնի խանութից, ինչպէս ասում
են, խանութպանի անզգուշութիւնից: Վնասը
մօտաւորապէս 5000 ռուբլու է հասնում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փոքր-Ասիա ուղարկվող նպաստները մեծ ծա-
ռայութիւն են մատուցանում փողովրդին: Թիւր-
քաց կառավարութիւնը այժմ հաշտ է նա-
յում այդ գործի վրա: Մարաշից հաղորդում են,
որ ուղարկված զգեստները մեծ օգնութիւն
ցուց տուեցին Ջէյթունից վախած մարդկանց,
որոնք համարեա բոլորովին մերկ էին մնացել:
Աւելի քան թէ հարկւր հիւանդ մարդիկ զետեղ-
ված են ժամանակաւոր հիւանդանոցում: Վատ-
միտներն դուրսը մտադրի է մի յատուկ գոր-
ծակալ ուղարկել Ջէյթունի կողմեր: Բոլոր նը-
պաստները բաժանվում են ոչ միայն լուսաւոր-
չական և բողոքական հայերի, այլ և կաթոլիկ
հայերի մէջ, որոնք այդ առիթով շատ խոր ըզ-
գացված են: Այժմ այդտեղ նպաստ են ստա-
նում մինչև 14,000 անձ: Անգլիական նպաստող
Ֆոնդը պաշտօնական ճանապարհով ուղարկել է
նորից 5,000 ֆունտ ստերլինգ (50,000 ռ.) բա-
ժանելու կարօտեալներին:

Վանից մեզ գրում են մարտի 20-ից. «Շուկան
տակաւին փակ կը մնայ: Գիւղերին դարձեալ
վերսկսած են անախորժ լուրեր հասնել, բայց
կառավարութիւնը անփութ չէ, սկսած է ամեն
կողմ զօրքեր ճամբել պաշտպանութեան հա-
մար... Միսիստանի սկսած են նպատակներ թա-
խտել կիսովին դադարեցունել, բաժինները կէ-
սի վերածել են՝ շատ գիւղացիներ տեղերին
կուղարկելով: Երեք բարձրագոյն ընդհանր
դեռ հոս են, բայց կրնան թէ ի մօտայ պիտու
մեկնին: Կը սպասեն որ ոչխարի տասանորդ
(աղնամ) հաւաքողները վերադառնան, մի քիչ
դրամ բերեն, որպէս զի կարենան ճամբայ ել-
լել»:

Անգլիական լրագիրներին հաղորդում են, որ
այժմ, երբ աւելի մօտ և մանրամասն են ծանո-
թանում Փոքր-Ասիայի դէպքերին, համոզվում են,
որ տեղի ունեցած թշուառութիւնը աւելի մեծ
է, քան յայտնի է մինչև այժմ:

«НОВОСТИ» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը խիստ
պէսիմիստական աչքով է նայում ապագայի
վրա և կարծում է, որ իրերի վիճակը արեւելքում
կենթադրվի ծանր բարդութիւնների և դաքնան
նորից անկարգութիւնների տեղի կունենան Փոքր-
Ասիայում: Թղթակիցը հաղորդում է, որ ստաց-
ված տեղեկութիւններին նայելով, հայ լեզուա-
խոսները աշխատում են ապստամբութիւն
առաջ բերել Հայէպի և Մարաշի չրջաններում:

Թղթակիցը կարծիք է յայտնում, որ եթէ գար-
նան իրականանան իր այդ պէսիմիստական հե-
թադրութիւնները, այն ժամանակ Ռուսաստանի
կամ Անգլիայի միջամտութիւնը անխուսափելի
կը դառնայ, որովհետև թիւրքերն, իր միջոցների
սղովթեան պատճառով, անկարող կը լինի ոչ մի-
այն զսպել ապստամբութիւնը, այլ մինչև ան-
գամ պահպանել կարգը երկրում:

Հալապի գործակալութիւնը հետեւեալ հեռա-
գիրն է ստացել Կ. Պոլսից. «Թիւրքիայում գտն-
վող բոլոր զենաւորանքների ստացած տեղեկու-
թիւնները հաստատում են, որ մարտի 8-ին
թիւրքերը սպանել են Բիւրսում, Հայէպի մօտ,
125 հայ-լուսաւորչական և 5 հայ-կաթոլիկ, որոնց
մէջ գտնվում էր և լեւոն Ստեփանեան քահանան:

Գիւղերը նորերս յարձակվել են իրանց այդի-
ներում բանող երկրագործների վրա: Սպանված-
ների թիւը ճիշդ յայտնի չէ»:

«New York-Herald» լրագրում տպված է հե-
տեւեւ լուրը Ֆիլիպոպոլից. «Այստեղ լուրեր են
ստացվում, որ Կայիրէյում կենտրոնացած 20,000
հայեր պատրաստվում են ափ չինել Ազանայի
վիլայեթում, անգլիացիների գիտութեամբ: Կա-
ռավարութիւնը վախենալով այդ բանից, ուղար-
կում է վեց զրահաւոր նաւեր՝ Կայիրէյի և Փոքր-
Ասիայի ափերին հակելու: Բ. Գուրը սաստիկ
վրդովված է Անգլիայի դէմ»:

Ռուսաց հեռագրական գործակալութիւնը հե-
ռագրում է ապրիլի 15-ից, որ նշանաւոր թիւրք
Մահմուդը նշանակվել է Ջէյթունի գալմագամ—
Ուրեմն, եւրօպական պետութիւնների հիւպա-
տանների առաջարկած պայմանները, որոնց զօ-
րութեամբ Ջէյթունի գալմագամը պէտք է քրիս-
տոնեայ լինէր, չեն իրագործվում: Ինչպէս յայտ-
նի է արդէն վերջին հեռագրից, երեք պետու-
թիւնների զենաւորները բողոքել են այդ բայի
դէմ:

Կ. Պոլսից հաղորդում են Ռէյսերի գործակա-
լութեան. «Պաշտօնապէս յայտարարված է, որ ա-
մերիկական միսիոնար Նապի բանտարկութեան
և ուրիշ միսիոնարների արտաքսելու լուրերը
զուրկ են որ և է հիմունքից»: Խեղճ կառավարու-
թիւն:

«Daily News» լրագրում կարդում ենք. «Վա-
նից, օրիորդ Կիպը Կաղարդում է անգլիական
կանանց նպաստող ընկերութեան, որ օգնու-
թեան գործը դեռ շատ աշխատանք է պահան-
ջում: Մօտ 15,000 անձ ստանում են նպաստ:
Միսիստանից այն է, որ վանի կառավարիչը
Ֆանատիկոս մարզ չէ և աշխատում է հանգս-
տութիւն պահպանել: Գիւղերում ևս հանգստու-
թիւն է տրուում այժմ գուցէ այն պատճառով,
որ ձիւնը թիւ չէ տալի քիւրդերին մեծ երթեւե-
կութիւններ անել»:

Լճից մեզ հեռագրում են «Новое Время» լը-
րագրին ապրիլի 2-ից. «Այստեղի լրագիրները
չենք կերպով յարձակվում են ֆրանսիական կա-
թոլիկների վրա՝ նրա արած կարգադրութեան առի-
թով, որով դադարեցված է «Երիտասարդ թիւր-
քա» կուսակցութեան օրգանի հրատարակութիւ-
նը և արտաքսված է Ֆրանսիայից նրա խմբա-
գիր Ամէլ-Բիւր-Բէլը: Սպասում են, որ կուսակ-
ցութեան կենտրոնը չուտով կը տեղափոխվի
Լճից և նրա հետ միասին դուրսեն ձիւնը:
«Երիտասարդ թիւրքա» կուսակցութիւնը տը-
սել է Բրիւսէլում մի հրաւեր, ուղղված մեծ
պետութիւններին, յորդորելով նրանց ամրացնել
Կարդանէլը և հաստատել Կ. Պոլսում մի խնա-
մակալութիւն, 6 կամ 4 մեծ պետութիւնների
ներկայացուցիչներից, բայց այն պայմանով, որ
հիմնով առանձին արաբական խալիֆայութիւն և
խալիֆի ավտոմատիստը նշանակվի Մէքքէ քա-
ղաքը»:

Անգլիական «Daily News» լրագիրը հաղոր-
դում է, որ թիւրքաց պօստում ահա թէ ինչ
խաղաղութիւն է տեղի ունենում, սրտառ ոսկի
փողը փոխարկել է արծաթադրամի և փոխանակ
200 թիւրքական լիւրայի՝ տեղ է հասցրել 200
արծաթադրամ: Փողի ծրարը կնքված է եղել պօս-
տային վարչութեան կնիքով: Լրագիրը վերջա-
նում է մի բացառանշանութեամբ, արդեօք այս բո-
ւրը բնորոշ չէ թիւրքական բարբերի տեսակէ-
տից:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՈՎԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, մարտի 31-ին
Պարսից կառավարութիւնը սկսել է զօրքեր
ուղարկել դէպի Սուդ-Բուլաղ ասված գաւառը,
որ գտնվում է Ուրմիայի ծովափ արևմտեան մա-
սում: Այդ երկրը լեռնոտ է և բնակեցրած է
բրդերով, որոնք բոլորն էլ մասնատեալ են,
սիննի աղանդի: Վերջերս սկսել են երեւել դը-
րանց մէջ եկուր կրօնաւորներ, որոնք այդ կա-
տաղի և մոլեռանդ ամբոխի վրէժներով իրենց
զրգուելու համար վառ գոյներով նկարագրում են
այն սպանութիւնները, աւարտութիւնները և

առևանգությունները, որոնք կատարվեցան բայց զեառադրված ձևերով հենց ուղղակիությանը հա- մընեցող... Արդարապես Շահը, իրան յատուկ ե- ուսնողով, աշխատում է երկիրը խաղաղ վիճա- կում պահպանել:

Արամյան դարձրեց հազարավորները կազմ- ված է անխորհրդ տեղացիներից և օտարահա- տակներից: Երեկ տեղիս Բեքարդիզարի (արտա- ըին գործերի նախարարության ներկայացուցիչ և քրեատեսանների դատաւոր) պաշտոնան, ներ- կայանալով հայոց փոխանորդին, կառավարու- թեան կողմից պահանջեց, որ հազարավորների մէջ օտարահատակ անձինք չը լինեն: Բացի սրանից, դերասան Աղայանը երեկոյան պիտի մի ներկայացում տար իր բենեֆիսին: Նոյն պաշտոնան պահանջում է, որ ներկայացումից զոյցած արդիւնքը չը մտնի օտարահատակ անձանց գրպանը, այլ մնայ տեղացիների օգ- տին:

Այստեղի հայերի չըջանում ևս մի հանգա- նակութիւն բացվեց, որի նախաձեռնողն եղաւ Լիւթալայի կամանը ընկերութիւնը, իրան յատուկ եւանդով: Գումարը կուղարկվի իշխման պատ- ըրիարքին՝ հասցնելու ում հարկն է: Գումարն առ- այժմ 300 թիւանից չէ անցնում:

Բարեգործական ընկերութեան մասնագործը ներկայացրեց իր կազմած ծրագիրն ընդհանուր ժողովին, որ միաձայն ընդունվեց:

Նամակը կըլքված էր, երբ իմացայ, որ կառա- վարութիւնը պահանջել է այստեղ ունենալ մի- միայն պարսկահատակ ուսուցիչներ: Այս առի- թով յաջորդ նամակով:

Արտաւազդ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Kölnische Zeitung» հաղորդում է, որ երեք- պետեան զաշնակցութեան պայմանները չուտով պէտք է վերանորոգվեն:

«Վիեննայից հեռագրում են «Новости» լրագ- րին, թէ Վիեննայի կայսրը, որ այցելութիւն տուեց Վիեննայի Ունիւերսիտետ թաղաւորին, Վիեննայի- կի պատգամաւորների ընդունելութեան ժամա- նակ յայտնել է, թէ իտալացիները չը պէտք է չառել Վիեննայի Աղուայի պարտութեան հա- մար: Իտալացի գիւնարները կուզեն են հերոսա- ըար, բայց բազմաթիւ թշնամի իտալացի աշո- ղութեամբ կարող էր ջարդել և գերմանացիներ- ին, եթէ նրանք իտալացիների տեղը լինէին:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մեր ոչխարատէրերը, որոնք արդիւնաբերում են բուրդ արտադրանքն ուղղակիւ համար, պէտք է աչքի առնել ունենան ի միջի այլոց այն հանգամանքը, որ այս տարի Աւստրալիայից բուրդ քիչ է արտադրվել և ուրեմն եւրոպա- կան վաճառատնոցներում կարող է բարձրանալ բուրդի գինը: Աւստրալիայում անցեալ 1895 թիւն սաստիկ երաշտ էր և կերակրի պակասու- թիւնից ու սաստիկ չորից կոտորվեց մինչև 10 միլիոն զոյւն ոչխար: Հայտնի է, որ այս տա- րի մօտ 200,000 հակ բուրդ կը պակսի Աւստ- ըրալիայի սովորական արդիւնաբերութիւնից: Նոյն իսկ մի ամիս սրանից առաջ Աւստրալիայում այնպէս չորեք է արել, որ ստիպված են եղել զարգացնել երկաթուղիների գնացքները մի առ- ժամանակ: Նաո մարդիկ մեռել են արեգակնա- հարից:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՒՐԻ, 8 ապրիլի: Ապրիլի 7-ին բուրա- րական իշխանը այցելեց Մեծ իշխան Միխա- յել Նիկոլաւիչին, մինիստրներին, նոյնպէս և թիւրքաց ղեկավարին:

ՊԵՏԵՐՈՒՐԻ, 9 ապրիլի: Իշխան Ֆելդինսկի, նրա սովորայի բոլոր անդամները, թիւրքաց սու- լթանի աղիւտանոր և Կ. Պոլսի ուսանց ղեկաւ- նութեան քարտուղար Սիմիրով ապրիլի 8-ին, ցերեկվայ 12 ժամին, ներկայ էին Պետրոպոլի- փոխի առձառում: Իշխանը մօտեցաւ Կայսր Ալեք- սանդր III-ի դամբարանին, դրեց մի չքեղ պսակ, երեսը իսպաղանի և երկար կանգնած էր դա- մբարանի մօտ աղօթելով: Նոյնպէս աղօթեց Կայ- սր Ալեքսանդր II-ի դամբարանի մօտ: Գրանից յետոյ բուրգարական մինիստրները և իշխանի սկիտայի անդամները, ծննդաւոր, աղօթում էին Ալեքսանդր III-ի և Ալեքսանդր II-ի դամբարան- ների մօտ:

Ապրիլի 8-ին այցելութիւն գործեցին բուրա- րական իշխանին գերմանական և իտալական ղե- կավարները: Նախաձայնց յետոյ Ֆելդինսկի իշ- խանը ընդունեց մեծ-բրիտանական ղեկավարին և

Պետերբուրգի ֆրանսական ղեկավարութեան հա- տարարատար կոստ Վովինէին: 4 ժամին իշխանն այցելեց արտաքին գործերի մինիստրին:

ՊԱՐԻՋ, 9 ապրիլի: Ձը նախկին սկսած դատին, երկուստեան մինիստրութիւնը վերցրեց դրա- մարկը 150,000 ֆունտ:

ՆիՅՅԱ, 9 ապրիլի: Գերմանական այրի կայս- րուհին, գիւրը ժամանելով Նիցցայ, այցելեց Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆելօրօֆային և Վիկտորիա թագուհուն: Երեկոյան գերմանական այրի կայսրուհին ճանապարհ կընկնի Պիւրէյ:

ԼՕՆԴՈՆ, 9 ապրիլի: «Daily News» հաղոր- դում է, որ նախագահ Կրիզթը պահանջեց «Chartered Company»-ից 3000,000 ֆունտ ստերլինգ վարձատրութիւն, բայց յետոյ աջողկեց կիսով չափ կրճատել այդ գումարը:

ՄԱՍՍՈՎԱ, 9 ապրիլի: Ընդհանուր զորութիւնը անխորհուր է: Ձրի պակասութեան և դժուարու- թիւնների պատճառով զօրքերը անգործութեան են դատարարուված: Աղիւստում հանգստու- թիւն է արժու:

ԲԵՐԼԻՆ, 9 ապրիլի: Կայսերական կանցլէրը, մրսեւու պատճառով, ստիպված է սենեակից չը դուրս գալ:

ԼՕՆԴՈՆ, 9 ապրիլի: Իշխանութիւնները Բու- լուլայում հաւատացած են, որ կառուցվող պաշտ- պանել լրացածը մատարելների դէմ: Հաղոր- դում են, որ Բուլուլայո տանող ճանապարհ- ների վրա դրված են դինամիտային ականներ և պատրաստված են նոյնպէս ուռնելու: Եթէ մա- տաքէները կը վերադառնան քաղաք, այն ժա- մանակ, երբ, կը սպասվեն մի պաշարները, որ ունի բուլուլայեան բերդապահ զօրքը:

ՊԱՐԻՋ, 10 ապրիլի: Վախճանվեց յայտնի ֆի- նանսիստ Լէօն Մէ:

ՎԻԵՆՆԱ, 10 ապրիլի: Վախճանվեց բարձր Մօրից Հիլբ:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐԻ ԲՈՐՍԱ

Ապրիլի 9-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արծէ . . .	94 ր. 35 կ.
Բերլինի վրա 100 մարկ . . .	46 > —
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	37 > 35
Ոսկի . . .	7 > 56
Մաքսային կուպոններ . . .	149 > —
Բորսային դիսկոնտ . . .	5 > 70/2
40/0 պետական բէնտա . . .	98 1/2 > —
Ներքին 50/0 առաջին փոխառութ. . .	286 > —
— երկրորդ . . .	251 > —
50/0 գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . .	215 1/2 > —
50/0 պետական երկաթուղ. բէնտա . . .	100 3/8 > —
40/0 ներքին փոխառութեան . . .	98 1/2 > —
41 1/2/0 գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . .	100 3/4 > —
Աղն. կալ. Պետ. բանկի խաղաղութ. . .	> —
41 1/2/0 վիսյակ. գիւր. հող. բանկի . . .	101 1/8 > —
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետա. . .	> —
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. . .	101 1/2 > —
Ընկերութեան օրըգաղաններ. . .	101 1/4 > —
Մոսկվայի քաղաք. օրըգաղաններ. . .	101 > —
0/0 ընկեր. . .	99 3/4 > —
Թիֆլիսի . . .	101 > —
Թիֆլիսի կալ. բանկի 60/0 . . .	99 1/2 > —
50/0 . . .	99 1/2 > —
Քաղաքային . . .	60/0 > 101 > —
50/0 . . .	99 1/2 > —

Իմբաղիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՄԱՆՈՒՐ
Հրատարակիչ՝ ԱՆԻՍԷԱՍ ԱՐԾՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌ
ՀԻՒԱՆԳԱՆՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, վարձուցով արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՍՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերադա- ժութեան, սիֆիլիս և վնասական հիւանդու- թիւններ:

Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԳՈՒՆԱՅԷԼԱ-ԲՈՒԴԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ակնաբի, կո- կորդի, թիւի և կրծքի հ. երկուշարթի, չորեքշա- թի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երե- խայոց և նեարդային հ. երեքշարթի, հինգշաբթի և չարաթի:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երե- այց հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեք, հինգ, և շա- բաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշարթի չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՂԻՎՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէղի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՂԻՎՈ քիմիական և խոշորացուցական հետազոտութիւններ է անում մէղի, լիւի, ա- բեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցի վերադառնալ ընդհանուր ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ԹԻՖԼԻՉԻ ՀԱՅՈՒՆԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ կիրակի, ապրիլի 14-ին, առաւօտեան ժամը 11 1/2-ին Սուրբ-Նշան եկեղեցու ճխական ուսուցիչարանի զահիրճում լինելու է

Ը Ն Գ Հ Ա Ն Ո Ւ Ր Ժ Ո Ղ Ո Վ

Պարապմուն առարկաներ են.

- ա) Անցեալ տարվայ երկու ընդհանուր ժողովների արձանագրութեանց ընթերցումը.
- բ) Անցեալ տարվայ երկու ընդհանուր հաշուի քննութիւնը.
- գ) 1896 թ. համար կազմած նախահաշուի քննութիւնն ու հաստատութիւնը.
- դ) Վարչութեան անցեալ տարվայ գործունէութեան տեղեկագիրը և,
- ե) Վարչութիւնից հերթով դուրս եկող երեք անդամի և չորս փոխ-անդամի ընտրութիւնը:

(№ 42) 1—2

Ս. ԷՋՄԻՍՏՆԻ

Եռայարկ տունն՝ որը գտնվում է վանքի առաջ եկեղեցու մօտ, ԱՃՐԳՈՎ ՏՐՎՈՒՄ է ՎԱՐՁՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ և ԻՎԵՐԵՐԻ հայոց կոնստաբոլայում՝ սոյն ապրիլ ամսի 22-ին, առանց կրկնաձրդի:

1—3 (№ 41)

Անգամ կոնստաբոլայի՝ Համադաս վարդապետ

Հ Ա Յ Գ Ո Ր Ծ Ի Զ Ն Ե Ր Ի Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր Ը

Լուսանկար ՏԵՐ-ՂԱՆՂԵԱՆԻ մօտ վաճառվում են հետեւեալ հայ գործիչների պատկերները՝ Հողերականներ. —Հինգերորդ դարու գործիչներից՝ ՍԱՀԱԿԻ և ՄԵՍՐՈՊԻ: Ժամանակակիցնե- րից՝ ՆԵՐՍԷՍ Վ, ԳԵՈՐԳ IV, ՄԱԿԱՐ և ՄԿՐՏԻԶ կաթողիկոսների, ԳՐԻԳՈՐԻՍ ԱԼԷԱԹՃԱՆՆԻ (կա թողկուս Կիւրիայի), ՄԱՏԹԵՍ ՊԱՏՐԱՐԻ ԻԶՄԻՂԵԱՆԻ, ԱՐԻՍԱԿԵՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԳՐԱ- ԿԵԱՆԻ, ԽՈՐԷՆ ՆԱՐԹԷՍԻ և ուրիշ արժանաւոր հոգեւորականների:

Նոյն տեղը վաճառվում են. —ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ, ՐԱՖԳԻ, ՌԱՖԱՅԵԼ ՊԱՏԿԱ- ՆԵԱՆԻ, ԾԵՐԵՆՅԻ, ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՅԻ, Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ, Պ. ԱԴԱՄԵԱՆԻ (բոլոր դերերում նկարված), ԽՐԱԳԻՐՆԵՐԻ, ԿԵՆԵԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ, նշանաւոր հայ ԿԱՆԱՆՑ՝ Ս. ՏԻՍԱԲԻ, ՄԱՐԻԱՄ ՄԷԼԻԿԵ-ԱՂԱՄԱԼԵԱՆ-ԱՐՄԻՈՒՆԻ, «ՄԵԱԿԻ» ԱՇԽԱՏԱԿԻՅՆԵՐԻ յօքեկանական ալբոմը, նմանապէս ուրիշ զանազան գործիչների լուսանկարները:

Վերջիշեալ պատկերները արժեն՝ մեծագիւր 3 բուրդի, ՄԻԶԱԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ 1 բուրդի, ԿԱ- ԲԵՆԵՏԱՅԻՆԻ կուզած պատկերները՝ 40 կօպէկ, ՎԻԶՏ կուզած պատկերները՝ 20 կօպէկ:

Հասցեն՝ ТИФЛИСЬ. Фотография Теръ-Гевондинца (На Михайловск. мосту). Համապարհա- ծախսը գնողի վրա է:

(№ 117) 4—10



ԲԻՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԲԻՄ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՀՆԻԿԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հաստատ մահ միներին, խուրդներին և ուրիշ կրօնականներին Այս միջոցը արտաբերում է այդ կենդանիներին զխաւարապէս ընտելացնելու, այնպէս որ նրանք չեն մնում զենանայարի տակ և չեն տարածում գարշահատութիւն:

ՄԼԱԿԱՆԻ ԴԷՍ ՀԵՂՈՒԿ, ոչնչացնում է նրանց ընդմիտ Նա չառ հաճելի հոտ ունի և բիծ է թողնում ձերմակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա: Փոշիացնելով նրան, սենեակի օդին հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեցը, ճանճը և մածակները:

ՓՈՇԻՄ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենայարմար միջոցն է բոլոր միջատները և նրանց սաղմերը բոլորին ոչնչացնելու համար: Այդ փոշին անփոխարինելի է լուսեր և մշակներ ոչնչացնելու հա- մար անփոխարինելու, ներքնակներում, թաղիքով պատած փայտային նպատերում: Ոչնչացնելով ցե- ցը և չունենալով նափթալիսի անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փոխարինում է նրան. դրա համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակները և ուրիշ մարթեղէն իրերը պահելու համար: Փոշու աղբեցութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջատների, մրջինների դէմ—գրեթէ վայրկեանական է—հետեանքը դարձանալի:

(№ 23) 7—50

Է Ժ Ա Ն Ա Գ Ի Ն Գ Ր Ա Գ Ա Ր Ա Ն Ը Ն Ե Ր Յ Ա Ր Ա Ն

(Վերամիջակայ փողոց, տուն № 3.)

Բ Ա Յ Է Առաւօտեան ժամ 9—2, երեկոյան 5—10

Կիրակի և տօն օրերը առաւօտեան 10—2

Տուն տանելու համար արվում են գրքեր և պարբերական հրատարակութիւններ: Վճար՝ ամսական 20 կօպէկ և 10 կօպէկ: Ընթերցարանի մօտքը 2 կօպէկ. 30 տոմսի արժեւորման—40 կ.:

Ստացվում են՝ հայերէն 1) «Մակ», 2) «Արձագանք», 3) «Նոր-Գար», 4) «Տարազ», 5) «Ար- բիւր», 6) «Մուր», 7) «Արեւել», 8) «Հաւիղ», 9) «Արարատ», 10) Ժողովածուներ:

Ռուսերէն. 1) «Кавказъ», 2) «Новое Обозрѣніе», 3) «Тифлисскій Листокъ», 4) «Русскія Вѣдомости», 5) «Новости», 6) «Новое Время», 7) «Биржевыя Вѣдомости», 8) «Каспій», 9) «Иверія», (վրացերէն), 10) «Русское Богатство», 11) «Русская Мысль», 12) «Новое Слово», 13) «Вѣстникъ Европы», 14) «Сѣверный Вѣстникъ», 15) «Міръ Божій», 16) «Недѣля».

(№ 31) 5—10

ՄՇԱԿԻ ԽՐԱԳՐԱՅԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հայերէն գրքերը

	Գինը
1) ԷՎԷԼԻՆԱ, Գրեգոր Արժրուհուն . . .	50 կօպ
2) ԹԻՐԻՔԱՅ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ, Գ. ԱՐժՐՈՒՆՈՒ . . .	20 "
3) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Ս. Մալուսեանի . . .	50 "
4) ՍԱՍՈՒՆ, Ա. Քալանթարի . . .	20 "

Օտարաբարաբացիները կարող են վճարը փողի տեղ ուղարկել պօստային մարկա- ներով:

(№ 59) 8—10

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Բ Ր Օ Կ Ա Ր Ե Ւ Ը Ն Կ
Հնարողներ
ԾԱՂԿԵԱՅ ՕԳԸԿՈԼՈՆԻ
Զանազան գոյնի
Ն օր ու թիւն! առաւելաի ջուր
«ՕԳԸ ԲՐՕԿԱՐ»
Զ Գ Ո Յ Շ Պ Ե Տ Ք Է Լ Ի Ն Ե Լ Կ Ե Ղ Ծ Ո Ւ Մ Ն Ե Ր Ի Յ
(ամ. 15. № 67) 10—12